նի՝ պատրաստակամ Յունաց պամենայն նիւթս չինութեան, սկիզբն արարին վերանորոգութեան, զկապարատպատ ձեղունն և զյատակ եկեղեցւոյն և զայլ տեղիս. և սպասակացուցեալ ծեփեցին ամբողջ զեկեղեցին, կամեցան և ձեռքն վրել յԱյրն Ծննդեան, բայց ընդդէմ կացին նոցա Լատինք, զի ինքեանք եւս բաժանորդ էին տեղւոյն։ Եւ՝ ի նորոգութեան պահու եղծին և ծածկեցին զՀայեցի խաչքարս և զարձանագրութիւնս՝ զոր գտին, որպէս կից միջնադրան դասուն՝ ի վերայ հարաւային սեան զհին տառս հայկական. եղծին նաեւ և զքազումս՝ ի մուզայից և ծածկեցին, որոց միացորդքն ցարդ երեւին յորմս, կամեցան Յոյնք հնարիւք խախտել եւ ձգել զտախտակեայ միջնադուռն, պատճառելով զյարդարումն սալից յատակին, այլ Ջանիւք Զաքարիա Պատրիարքի, հնարք նոցին՝ ի դերեւ ել, և դուռն մնաց՝ ի տեղի իւր, (1842)։

Ցետ վերանորոգութեան եկեղեցւոյն Բեթղեհէմի, խաղաղ տիրապետեցին Յոյնք այնմ, և սկսան բռնանալ եւ չարիս հասուցանել Հայոց. որք խնդրէին սեփհականել զհիւսիսային դուռն, կախել կանթեղս՝ ի սիւնազարդ գաւիթն եւ աւել ածել, որպէս Յոյնք. ունել զբանալի երկաթեայ դրան. և վասն սոցին իրաց եատուն գրել Դատաւորին՝ ի Դուռն՝ խնդրելով զդործադրութիւն հրովարտակին, եւ բառնալ զբռնութիւնս Յունաց. ՝ի ՟Ռ Բամասան ՌՀՈՀ։ Գրեցին նաեւ ինքեանք գիր ազաչանաց, յորում յայտ առնէին թէ՝ Յոյնք զՀրովարտակն ընդհանուր նորոգութեան կալեալ իբրեւ անչեղի օրէնք՝ տիրեցին բովանդակ եկեղեցւոյն, ՝ի մուտացոնս արկեալ զիմաստս առաջին հրովարտակաց՝ ուրացեալ զերաւունս բաժանորդութեան, տիրաբար եւ ըստ կամաց իւրեանց գործարեցին զբովանդակ եկեղեցին կանթեղօք և պատկերօք, և զանան բառնալ զսպասս եկեղեցւոյն Հայոց, արգել եւ խափան լինելով ելից և մտից նոցին յարտաքին և՝ի ներքին դրանց։ Վերջապէս ոչ կամին Յոյնք կանգնել սեղան Հայոց, եւ ըստ պահանջման հարկին պատրաստել զսպասս եկեղեցւոյ և զայլ իրս մինչեւ ցբեւեռ մի։ Այս գիր ընդ իլամի Դատաւորին երուսաղէմի մատուցաւ՝ ի Դուռն գրով Պատրիարքին եւ ազգին։